

Պինյատա



Իսպաներեն Piñata բառից: Սա մեքսիկական խոշոր չափերի խաղալիք է: Սրանով խաղերը կազմակերպվում է մանկական հանդիսությունների ժամանակ: Խաղալիքը սովորաբար ունենում է կենդանու (հիմանականում ձիու) կամ երկրաչափական մարմինների ձև և զարդարված է լինում տարբեր իրերով: Այս խաղալիքները

պատրաստվում են պապյե-մաշե տեխնոլոգիայով, դրանց մեջ լցվում են տարբեր անակնկալ իրեր, կոնֆետներ ու խաղալիքներ: Խաղի իմաստը կայանում է նրանում, որ երեխաները փակ աչքերով պետք է փայտիկի օգնությամբ կտորեն բարձր տեղից կախված խաղալիքը, և անակնկալները պետք է ցած թափվեն:

Ենթադրվում է որ պինյատայի հիմք են հանդիսացել չինական լապտերիկներն ու պարող վիշապները: Սրանց հետ եվրոպացիները (իտալացիներն ու իսպանացիները) ծանոթացել են միջնադարի վերջում: Հենց իսպանացիներն էլ այդ գաղափարը տարան Լատինական Ամերիկա, որտեղ գուճապետ պինյատան պայծառացրեց մեքսիկացիների միպաղաղ կյանքը: 19-րդ դարի սկզբներին պինյատան արդեն տարածվեց ողջ աշխարհում: Իսկական ձեռագործ պինյատա պատրաստելու համար պահանջվում է 7-ից 14 օր:

Մեքսիկացիները պինյատա պատրաստում են ցանկացած տոնի ժամանակ, դրանք զարդարելով ժապավեններով ու գուլյնագուլյն ներկելով:

Պինյատայով խաղը մանկական զվարճալիք է հիշեցնում:

Երեխայի ձեռքը տալիս են փայտ, կապում աչքերը, տեղում նրան պտտեցնում (մյուս երեխաները անվտանգ հեռավորության վրա անընդհատ շարժման մեջ են գտնվում, որպեսզի մոլորեցնեն փակ աչքերով երեխային): Փակ աչքերով երեխան փորձում է գտնել



ու փայտի օգնությամբ կտորել պինյատան, որի

արդյունքում երեխաները պարգևատրվում են անակնկալներ

ով ու քաղցրեղենով: Խաղը սովորաբար ուղեկցվում է երաժշտությամբ ու մանկական երգերով:

Տոնից մի քանի օր առաջ կանայք ու երեխաները պապյե-մաշե սկզբունքով պատրաստում են մեծ կենդանու և զարդարում դրանք:

Պինյատայի հիմնական խաղալիքը համարվում է ձիու կամ բազմանկյուն աստղի տեսքով խաղալիքը: Պինյատան կոտրելու փայտիկի վրա օղակ է արվում ձեռքի համար, որպեսզի փայտիկը հանկարծ չթռնի ձեռքի միջից ու չվնասի շրջապատի մարդկանց: Խաղալիքը պատրաստելուց հետո նրա հետին մասում փոքրիկ անցք է բացվում, ապա դրա մեջ են լցնում քաղցրավենիք, մանր խաղալիքներ: Այնուհետև բացված անցքը կրկին անգամ պապյե-մաշե տեխնիկայով փակվում է, ու պատրաստի խաղալիքը կախվում է բարձր տեղից: Խաղն ավելի հետաքրքիր դարձնելու համար



ցանկալի է, որ կախելու համար նախատեսված թելը ամուրի չկապվի, որպեսզի կապված խաղալիքը շարժական լինի: Խաղը վարողը թելի օգնությամբ կտեղաշարժի խաղալիքը և այն գտնելը ավելի կբարդանա: